

Մինչև երբ, ասա, յար և տարածամ,
 Կեանքի և մահու այս նեղ օրերում
 Պիտի թափառես, դժմովդ դաժան,
 Քո ձեռքով քանդած աւերակներում.
 Եւ դեռ մահադոյժ երգդ երգելով:

Խնդում ես, հրճում

Է՛լ ինչ ես ուզում.

Դու ժանտ թւերով ազատ, համարձակ
 Ամրող աշխարհում թոյն տարածեցիր.
 Եւ քո պատճառած ծանր ցաւի տակ
 Դրախտ երկիրը դժոխք դարձրիր:
 Եւ կործանեցիր.

Կորիր, հեռացիր.

Մեր նախնի հարանց արիւնով գնած
 Ազատութիւնը կորուստ մատնեցիր
 Եւ մեր պապերի դարերով թողած
 Ժառանգութիւնը ճշու ու փուշ յարիր.

Գոնէ ամաչիր,

Գէթ հիմա լռիր.

Ճանաչում եմ քեզ և ձայնդ խոստ
 Ո՞վ անմիութիւն և դու չար նախանձ.
 Ամբարիշտ ես դու, ձեռքերդ արիւնոտ
 Դուք մեզ հասցրիք չարիք չափազանց.
 Թող ձեր անունը աշխարհից ջնջուի
 Որ նախատինք էք ամբողջ մի ազգի.

Թող այդպէս լինի

Վախճանը վատի:

II

Յուսահատութիւն դեռ մեզ չէ տիրել,
 Եւ ոչ էլ քեզնից մենք երկիւղ ունենք.
 Միութեան, սիրոյ, կենսատու բոյսից
 Կարենք նիւթ քաղել. և այդ նիւթերից
 Քո դէմ հակաթոյն գիտենք պատրաստել.

Քոյնիցդ ազատուել

Եւ առողջ լինել.

Քանդուած շէնքերից քարեր ժողովել
 Քայքայուած տունը վերստին շինել.
 Դիտութեան լուսով քո դէմ մարտնչել
 Եւ քո առաջին պատնէշներ կանգնել

Եւ այնուհետեւ

Միշտ խաղաղ ապրել:

Մ. ՆԱԳԻՐԱՐԻԱՆ.